## 72. ՔՈՉԻՋ ԳՅՈՒՂ

*693. Գյուղամիջում մնացել է անտաշ քարերով շինված մի թաղակապ եկեղեցի, որի արևմտյան պատի վերին մասում ագուցված մի սալանման քարի վրա փորագրված է խաչ. շուրջը 8 տող.*



ՑԱՆՈՒՆ Ա̄Ց. ԵՍ ՀԷԿԱՉ| ՍՐԱՆՈՑԻՆ ՀԱՑՐԷՆ| ԻՔՆ :Դ: ԲԱԺԻՆ| :Ա: ԻՄ ԷՐ. ԵՏ|ՎԻ ՎԱԽՄ ԸՍՏ|ԵՓԱՆՈՍ . . . | . . . . | . . . |

Ծանոթ. *Մնացել է 6 տողը, վերջին 2-ը խապառ ջնջված են։*

## 73. ՄԻՆՔԵՆԴ ԳՅՈՒՂ

*Գյուղի կենտրոնում մնացել է անտաշ քարերով շինված մի թաղակապ եկեղեցի, որի շուրջը մի քանի տապանաքարեր։ Գյուղից մոտ չորս կիլոմետր հարավարևելք կա սրբատաշ քարերով շինված փոքր մատուռ, ծածկը փլված, շուրջը մի քանի տապանաքարեր։*

*694. ԵԿԵՂԵՑՈՒ հարավային մուտքի բարավորի վրա 3 տող.*



ՇԻՆԵՑԱՒ Մ̄Բ. ԵԿԵՂԵՑԻՍ ՆՈՐԱԿ|ՆՈՒՆՔ, ՀԱ˪Ց˩ԿԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴՍ.| ԹՎ˪ԻՆ˩ :ՌՃԻԴ: (1675):

*695. ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐԻ վրա, որը գտնվում է եկեղեցու հարավային պատի տակ, 2 տող.*



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ[Ն] ՏՐ̄. ՀԱՑՐԱ|ՊԵՏԻ̄Ն. ԹՎ˪ԻՆ˩ :Ռ̄ՃԺԱ: ԷՐ (1662):

*696. ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐԻ վրա, որը գտնվում է մատուռի մոտ.*



ԱՅՍ Է ՀԱ˪Ն˩Գ˪ԻՍՏ˩ ՈՍԳԷԴՈ|˪Ի˩ԿԻՆ. ԹՎ˪ԻՆ˩. :ՌՃԽԷ: (1698):

*697. ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐԻ վրա, նախորդի մոտ, 4 տող.*



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՅԱՐՈՒԹԻ-ՆԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻ| . . . . . . . . |ԹՎ˪ԻՆ˩ :ՌՃԼԴ: ԷՐ (1685):